

ՆԱՄԱԿ ՍԻՐՈՅ, ՆԱԽԱՆՉԻ ԵՒ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ներկայիս մեծ է թիւը անոնց, որոնք միշտ նախանձով կ'այրին, երբ իրենց եղբոր յաջողութիւնը տեսնեն, յատկապէս երբ ան նիւթապէս կամ արհեստով եւ կամ իր ուսուցումներուն համար կը յարգուի շատերուն կողմէ: Նախանձոսները երբ այս տեսնեն, կը հալին ու կը մաշին, բամբասամբի խօսքեր կը յօրինեն անոր մասին եւ Աստուծոյ կամֆին հակառակ կը շարժին, որ իրենց եղբոր այդ յաջողութիւնը շնորհած է: Ահաւասիկ թէ ինչու, նոյնիսկ եթէ նախանձոտը մեծապէս ճշմարիտ եւ բազմաթիւ առաքիւնութիւններու տէր ըլլայ, կուսական սրբութիւն ունենայ, օրուան ընթացքին պահեցողութեամբ եւ ճգնութեամբ ինքզինքը մաշեցնէ գիշեր ու ցերեկ, բուրձով եւ մոխիրով մշտապէս արցունքներ թափէ, իր ողորմութիւններովը աղատանայ, մեծամեծ հրաշքներ գործէ, աղօթքներով եւ փառաբանութեամբ երկինքի հրեշտակներուն նմանի, նոյնիսկ մարտիրոսանայ ու կրակի մէջ այրի եւ սակայն իր սրտին մէջ նախանձ եւ չարութիւն ունենայ, մարդասպաններ եւ շնացողներէ աւելի պիղծ եւ մեղքերու մէջ լողացող ամբարիշտներէն աւելի ամբարիշտ պիտի ըլլայ: Ո՞ր չարիքը ուրեմն կրնայ աւելի ժանտագոյն ըլլալ, քան նախանձը, որ կրակէն աւելի այրող է, սուրէն աւելի բնաջնջող է: Ո՞վ կրնայ հանդուրժել այդ բոցին եւ կամ ի՞նչ տեսակի ներում պիտի ունենան նման սատանայական անձերը:

ՄԱՍՈՒՆՔ




Սուրբերու անիւններէն մասնիկ մը, փշրանք մը, երբ բարեպաշտական զգացումներով արծաթեան փոփր տուփերու մէջ դրուած են կը կոչուին մասունք:

Անցեալին սովորութիւն չկար շարժական տուփերու մէջ պահելու սուրբերու անիւններէն մասնիկներ: Նոյնիսկ փոփր ոսկորի բեկորներ կը թաղէին եւ գերեզմանաբարերը կը պատրաստէին անոնց համար:

Այս երեսոյթը պատճառ դարձած է, որ զանազան սուրբեր մէկէ աւելի գերեզմաններ ունենան:

Աւելի ետք է, որ մարդիկ սկսան ճանաչելու տուփեր շինել եւ անոնց մէջ պահել կամ խաչին մէջ գետեղել մասունքները: Նոյնիսկ վիզէն կախելու նպատակով փոփր տուփիկներ պատրաստած են անոնց մէջ ամփոփելու համար սուրբերուն մասունքները:

Այսօր մեր բոլոր եկեղեցիներուն մէջ Ա. Սեղանի բազմոցը զարդարող մեծ թէ փոփր զանազան մասունքներ կան, ճանաչելու թէ պարզ տուփերուն մէջ, որոնք մեր բարեպաշտ ժողովուրդի պաշտամունքին արժանացած են:



ԲՈՒ ԽՈՍԵՐ ԽՆ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՆ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 23 ՅՈՒՆԻՍԻՆ 2022

ԹԻՒ 4

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՆՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես.58.13-59.7 Ա.Տմ. 4.12-5.10 Յհ.3.13-21

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 3.13-21

Ոչ ոք երկինք ելա՝ բացի Մարդու որդիէն, որ երկինքէն իջաւ եւ երկինքի մէջ է: Եւ ինչպէս Մովսէս պղինձէ օճր բարձրացուց անապատին մէջ, նոյնպէս ալ Մարդու Որդին պէտք է բարձրանայ, որպէսզի անոր հաւատացողը յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ՝ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր Որդին աշխարհ դրկեց՝ ոչ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ՝ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր. իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է, Աստուծոյ միածին Որդիին չհաւատալուն համար:

Եւ դատապարտութիւնը այս է. Լոյսը աշխարհի եկաւ, բայց մարդիկ խաւարը լոյսէն աւելի սիրեցին, որովհետեւ չարութիւն կը գործէին: Ով, որ չար գործ կը կատարէ՝ կ'ատէ լոյսը եւ լոյսին չի գար, որպէսզի իր գործերը չյայտնուին: Սակայն ով, որ կը կատարէ ինչ որ ճշմարիտ է՝ լոյսին կու գայ, որպէսզի յայտնի ըլլայ թէ իր գործերը Աստուծոյ կամքին համաձայն գործուած են:

Առաս Քրիստոսի ԳԿՄ՝ ՔՐԻՍՏՈՒԵԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ո՛չ միայն դժուար է քրիստոնէական կեանք ապրիլը, այլեւ՝ անկարելի: Անկարելի կ'ըլլայ, եթէ երբեք Քրիստոսի չենք միացած ինչպէս նիւղ մը ծառին կը միանայ: Առանց Քրիստոսի մենք ոչինչ կրնանք ընել (Յհ. 15.5): Իսկ երբ Յիսուսի միացած ըլլանք, ամէն ինչ կրնանք տանիլ շնորհիւ իրեն, որովհետեւ ինքն է որ մեզ կը զօրացնէ իր կամքը կատարելու համար (Փլպ. 4.13): Առանց Քրիստոսի օգնութեան, մենք չենք կրնար քրիստոնէական կեանք ապրիլ: Առանց Քրիստոսի Հոգիին, մենք անկարող ենք ապրելու աստուածապաշտութեան կեանք, հոգեւոր կեանք: Ահա թէ ինչու Քրիստոս խոստացաւ Հօրը երթալէ ետք Սուրբ Հոգին դրկել մեզի (Յհ. 14.16):

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՏՕՆ ԱԹԱՆԱՍ ԵՒ ԿԻՐԵՂ ՅԱՅՐԱՊԵՏԱՅՆ

Հոչականուն ախոյեան հաւատոյ Ս. Երրորդութեան՝ ընդդէմ Արիոսի, որ ուրացած էր Քրիստոսի աստուածութիւնը: Քրիստոնեայ բարեպաշտ ընտանիքի գաւակ, ծնաւ 295-ին Աղեբսանդրիոյ մէջ: Նոյն ֆաղափին Աղեբսանդրոս հայրապետը, որ մը տեսնելով, որ անիկա դեռ մատաղ մանուկ, ծովեզերքը եպիսկոպոսի կերպ առած, մկրտութիւն եւ ձեռնադրութիւն կատարել կը ձեռնարկէ, հոգեւոր կոչումի նշան նկատեց իր այդ ընթացքը եւ գայն ընդունեց հայրապետանոցի մէջ, ուր զարգացաւ շնորհալի փոքրիկը: Յետոյ սարկաւագ ձեռնադրուեցաւ անկէ եւ կարն ժամանակի մէջ փայլեցաւ իր տաղանդով, աստուածաբանական խոր հմտութեամբ ու գրչի եւ խօսքի ձիրքերովը առարկայ դառնալով ամէնուն ուշադրութեան: Սարկաւագ էր տակաւին, երբ ընկերակցելով իր Եպիսկոպոսին, Նիկիոյ ժողովին մէջ պաշտպանեց ուղղափառ հաւատքը: Աղեբսանդրի յաջորդելէ ետք, իբրեւ պատրիարք Աղեբսանդրիոյ, իշխանութեամբ եւ անկի ոգեւորուած ջանքով պայքարեցաւ աղանդամիտ հոսանքներու, մասնաւորապէս Արիանոսներու եւ Կիսարիանոսներու դէմ. եւ այդ պատճառաբանիցս ենթարկուեցաւ բուն հակառակութեան, երբեմն ստիպուելով նոյնիսկ հեռանալ իր աթոռէն: Մեռաւ 373-ին: Իր հզօր վարդապետութիւնը եւ անհամեմատ կորովը արժանի դարձուցին զինքը նկատուելու եկեղեցւոյ ամենամեծ վարդապետներէն մին: Իրաւամբ է, որ Ս. Գրիգոր Նագիանգացի կոչած է գայն «Սիւն Եկեղեցւոյ»:

Իր գրական երկերը, ամէնքն ալ աստուածաբանական եւ ջատագովական, որոնցմէ կարեւոր մաս մը Ե. դարուն եւ յետոյ թարգմանուած են հայերէնի, եկեղեցական մատենագրութեան ամենէն թանկագին հարստութիւններէն կը համարուին իրաւամբ:

ԿԻՐԵՂ ՅԱՅՐԱՊԵՏ

Եգիպտացի ազնուական եւ բարեպաշտ ընտանիքէ, ազգական Թէոփիլոս պատրիարքին, որմէ ձեռնադրուեցաւ եւ 412-ին անոր յաջորդեց իբրեւ պատրիարք Աղեբսանդրիոյ: Վարդապետ եկեղեցւոյ եւ կորովի պաշտպան ուղղափառ հաւատքին: Ինքն էր, որ նախագահեց Նիեսոսի տիեզերական ժողովին, ջախջախեց Նեստորի հերետիկոսութիւնը եւ «միաւորեալ մի բնութիւն» բանաձեւովը, որ հիմն է Հայաստանեայց եկեղեցւոյ դաւանութեան, իր վերջին նշնորումին յանգեցուց քրիստոսաբանութիւնը: Այնքան եռանդուն հոգով ջանաց ջնջել հեթանոսութեան հետքերը Աղեբսանդրիոյ մէջ, որ յանիրաւի զըրպարտուեցաւ իբրեւ պատճառ սպանութեան Հիւպատիա իմաստասէր տիկնոջ: Հեղինակ է մեկնաբանական եւ աստուածաբանական բազմաթիւ գիրքերու, որոնցմէ շատերը հայերէնի թարգմանուած են մասամբ Ե. եւ մասամբ Ը. դարերուն Սիւնեաց Դպրոցի պատկանող մատենագիրներու միջոցաւ: Կիրեղ հայրապետ մեռաւ 444 թուականին:

Հայ եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն այս տարի Աթանաս եւ Կիրեղ հայրապետներու տօնը կը զուգահիշուի Շաբաթ՝ 22 Յունուարին:

Կը շնորհաւորենք Աթանաս եւ Կիրեղ անուն ունեցող մեր բոլոր ժողովուրդի զաւակներուն:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Տ Գ Ա Ս

Կը ՅԱՂԹԵՆՔ՝ ԵՐԲ ՔՐԻՍՏՈՍ ՄԵՋ Կ՛ԱՌՎՃՆՈՐԳԷ

Կարելոր չէ թէ ուր կ'առաջնորդէ մեզ Յիսուս, լէ՞ն, թէ՛ ձոր, անապա՛տ, թէ՛ անտառ, մարդաբնակ վայրէ՛ր, թէ՛ դիւաբնակ վայրեր: Կարելորը այն է որ Ինք ըլլայ մեր առաջնորդը: Աստուած Իսրայէլի ժողովուրդը դէպի փոթորկալից Կարմիր ծովը առաջնորդեց, բայց ան ծովը ցամքեցուց անոնց ոտքերուն առջեւ: Ան զիրենք չառաջնորդեց դէպի կանաչորակ մարգագետինները, այլ՝ դէպի անջրդի անապատը Սինայի, եւ սակայն այդ անջրդի վայրին մէջ էր, որ Աստուած անջուր ժայռերէն ջուր բխեցուց, այդ անհաց անապատին մէջ էր, որ Աստուած զիրենք կերակրեց երկնային մանանալով:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Ս Ը

Երբ Աստուած ինքն է մեզ առաջնորդողը կեանքի փշալից ճամբաներէն՝ վստահ եղէք, որ այդ փուշերը կոխկրտելով պիտի քալենք երթանք: Երբ Տէրը ինքն է մեզ առաջնորդողը խաւար ձորերէն՝ վստահինք իրեն, եւ ան խաւար ձորերը Թաբոր լեռի պիտի վերածէ, ուր Աստուծոյ փառքը պիտի ճառագայթէ մեր դէմքերուն վրայ:

ՈՂՈՐՄԷ՛ ՄԵՋԻ Ո՛Վ ՏԷՐ

ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՉԵՍ...

ԵՐԲ ԿՈՒՉԵՍ ԳԻՏՆԱԿ ԶԱՐԵՐՈՒՆ ՎԱՍԻՃԱՆԸ, Կարդա՛ Սաղմոս 52

Ինչո՞ւ չարութեամբ կը պարծենաս, ամբարտաւան մարդ, մնալուն նախատինք դառնալով Աստուծոյ: Չարիքներ կը խորհիս, լեզուով կը վիրաւորես սուր անելիի պէս, եւ նենգութիւն կ'ընես: Բարիքէն անելի չարիքը կը սիրես, ճշմարտութիւնը խօսելէն անելի՝ ստութիւնը: Կը սիրես կործանիչ խօսքեր, դուն՝ նենգաւոր լեզու: Ուստի Աստուած քեզի յախտեան պիտի կործանէ, պիտի բռնէ ու խլէ քեզ քու տունէդ, արմատախիլ պիտի ընէ քեզ ողջերու աշխարհէն: Արդարները պիտի տեսնեն ու վախնան, պիտի ծիծաղին քու վրայ, եւ պիտի ըսեն,- «Ահա այն մարդը, որ զԱստուած իր ապաւենը չդարձուց. իր անբաւ հարստութեան վստահեցաւ, եւ չարութեան մէջ փնտռեց իր գօրութիւնը»: Բայց ես Աստուծոյ տան մէջ տնկուած պտղալից ձիթենի մըն եմ, Աստուծոյ սիրոյն կը վստահիմ առյաւէտ:

Մեզի յաւէտ գոհութիւն պիտի յայտնեն, ո՛վ Աստուած, ինձի ըրած քու բարիքներուդ համար, եւ քու անունդ ու բարութիւնդ պիտի հռչակեմ ներկայութեանդ անոնց՝ որոնք քեզի հաւատարիմ են:

ՄԻՇՏ ՄԱՂՄՈՍ ԿԱՐԳԱՅԷՔ